

զարգացման խթանումը՝ որպես ՓՄՁ պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների կարևորագույն սկզբունք,

դ) գյուղատնտեսական ապրանքների վերամշակման և տեղական արտադրության պարենով բնակչության ապահովումը՝ որպես հանրապետության տնտեսության զարգացման և տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն ուղղություն և ՓՄՁ զարգացման ուղղվածությունն այդ նպատակի իրականացմանը,

ե) առանձնակի ուշադրություն և օժանդակություն ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ-ներին, որոնք չնայած ոչ համաշափ, բայց արդեն կազմավորվում և գործում են:

Փոքր և միջին ձեռնարկությունները, ինչպես նաև անհատ ձեռներեցությունը, լինելով ժամանակակից շուկայական տնտեսության կազմակերպական հիմքերից մեկը, հսկայական ներուժ են պարունակում նոր աշխատատեղերի ստեղծման և ինքնազբաղվածության ապահովման առումով։ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացման, զբաղվածության ապահովման և, վերջին հաշվով, տնտեսական համակարգի բնականոն գործունեության համար։ Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ եվրոպական զարգացած երկրներում նոր աշխատատեղերի գրեթե 65 տոկոսն ապահովվում է փոքր և միջին ձեռնարկությունների միջոցով, ընդ որում նրանց է բաժին ընկերում համախառն ներքին արդյունքի 40–60 տոկոսը։ Այս ոլորտի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմել անցումային տնտեսությամբ պայմանավորված տնտեսական ու սոցիալական դժվարությունները՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով տնտեսության զարգացման համար։

Մեր ուսումնասիրությունները փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության միջազգային փորձի վերաբերյալ ցույց են տալիս և հաստատում են, որ փոքր բիզնեսն ամենաժողովրդավարական, հասարակական ինստիտուտն է, որտեղ յուրաքանչյուր ձեռներեցի հնարավորություն է տրվում դառնալ ոչ միայն տնտեսական զարգացման օրենքու, այլև սուբյեկտ։ Փոքր բիզնեսի ոլորտն ապահովում է ազգային տնտեսությունների ՀՆԱ-ի նշանակալի մասը, հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակահատվածում ապահովել տնտեսական աճ՝ միևնույն ժամանակ շտկելով անցումային փուլի անցանկալի դրակորումները, ստեղծում է նոր աշխատատեղեր, նպաստում «միջին խավի» կայացմանը և ամրապնդմանը։

ՀՐԱՏԵՍ ԱՎԵՏԻՍԻՍԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. ԶՈՐԱԲՅԱՆԻ անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Եթե ներկայումս Հայաստանի տնտեսագետների շրջանում գոյություն ունի բավականին տարածված կարծիք այն մասին, որ անցումային փուլը որոշակիորեն ավարտուն է, ապա մեր համոզմամբ այդ կարծիքը չի կարող վերաբերել գիտության և ինովացիաների կառավարման ոլորտին։ Երկրում գիտատար ակտիվների ֆինանսավորումը և «քողարկումը» դեռ մինչև այժմ գերազանցապես պետական «մենաշնորհ» են¹։ Սա խիստ հակասական իրավիճակ է և խոսում է այն մասին, որ գիտահետազոտական ինստիտուտը գրեթե չի ինտեգրվել շուկայական տնտեսությանը՝ հաշվի առնելով դրա զարգացման արդի օրինաչափություններն ու միտումները։

¹ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» ՀՀ ԱՎՃ, 1998-2008 թթ.:

Հայաստանի Հանրապետությունում ներկայիս ինովացիոն գործունեության ֆինանսավորման մեջ ասած թույլ արտահայտված, անորոշ և չհամակարգված իրավիճակն ունի իր խիստ որոշակի պատճառները, որոնցից, թերևս, ամենակարևորներից է լայն իմաստով այդ ֆինանսավորման ինստիտուտի բացակայությունը երկրում:

Վերջինիս շրջանակներում մեր հետազոտություններով կատարված հաշվարկների ու վերլուծությունների արդյունքում հատկապես Հայաստանի համար կարևորագույն հիմնախնդիրներ ենք դիտում և առաջարկում հետևյալ 8 ուղղությունները.

- ինովացիաների՝ մասնավորապես ԳՀՓՆԱ փուլի, որն ինովացիաների ֆինանսավորման տեսանկյունից գլխավոր և հիմնական մասն է, ֆինանսավորման էապես փոքր ժավակները,
- ինովացիաների գործունեության և դրա ֆինանսավորման խթանման պետական նպատակադրված քաղաքականության թույլ գործադրություններն ու ցածր արդյունավետությունը,
- ինովացիաների ֆինանսավորման ինստիտուցիոնալ այնպիսի կառուցվածքի բացակայությունը, որը կնպաստի ֆինանսավորման ակտիվացմանը Հայաստանում՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս առանձնահատկություններն ու միտունները, այլ ոչ թե ուղղակիորեն կտեղայնացվի միջազգային փորձից,
- մասնավոր կապիտալի, այդ թվում նաև արտերկրի բարեկամներից, ընկերներից մասնավոր ներդրություններով պայմանավորված, պասիվ պահկածքը ինովացիոն բնագավառում,
- երկրում պրոֆեսիոնալ ինովացիոն կառավարման ինստիտուտի բացակայությունը,
- ԳՀՓՆԱ իրականացնող ինստիտուտների, համալսարանների և տնտեսվարողների միջև նպատակասուղղված համագործակցության բացակայությունը,
- տնտեսվարողների կորպորատիվ կառավարման լիարժեք սկզբունքների բացակայությունը,
- մասնավոր տնտեսվարողների պասիվությունը արժեքների շուկաներում,
- ինովացիաների ֆինանսավորման ոլորտում օրենսդրական դաշտի անկատարությունը:

Հաշվի առնելով այն հաճամանքը, որ Հայաստանում ներկայում առկա չէ կամ գուման իրապարակային հայտարարված չէ մասնավոր վենչուրային կամ այլ ինովացիոն նախագծեր ֆինանսավորող հիմնադրամ, որն իր միջոցները կարող եք ուղղել ինովացիոն ոլորտի ֆինանսավորմանը, ինչպես նաև մեր հետազոտություններում գնահատված և բացահայտված ինովացիաների ֆինանսավորման առկա և ներուժային ծավալների էական խզման ներկայությունը, կարելի է վստահարաբ նշել, որ նշված հիմնախնդիրների լուծումը հրատապ է, նույնիսկ՝ ուշացած:

Այս առումով, տնտեսական զարգացման արդի փուլում պետության միջամտությունը և կարգավորումը ինովացիոն գործունեության ֆինանսավորման գործընթացներում պետք է լինի ուղղակի և ակտիվ նախաձեռնողական՝ նույնիսկ հաշվի առնելով նաև ծավալվող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հնարավոր ազդեցություններն ու սոցիալ-տնտեսական հետևանքները, պետական բյուջեի ֆինանսական հնարավորությունների սահմանափակումները: Ավելին, ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթություններն ու գերակայությունները, որոնք ներառված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրերում, ռազմավարական փաստաթերթում, ուղղակիորեն հանգում են գիտելիքահեն տնտեսության ծևավորմանը և դրա հետագա կայուն զարգացման ապահովմանը: Ակնհայտ է՝ վերջինս անհնար է պատկերացնել և ուրվագծել առանց ինովացիոն գործունեության համահունչ զարգացման, որի հիմքում պետք է ընկած լինի ինովացիոն ֆինանսավորման արդյունավետ և դիմանիկ զարգացող համակարգի առկայությունը: Սա ապացուցվում է նաև միջազգային լավագույն փորձով:


Նկատի ունենալով վերոհիշյալ՝ մեր կողմից որպես լուծում առաջարկվում է Հայաստանում ստեղծել ինովացիոն գործունեության ֆինանսավորման մասնագիտացված կառույց, որը ծևավորման և գործունեության նախնական շրջանում ուղղակիորեն պետք է ունենա պետության աջակցություն, ինչպես ֆինանսավորման՝ հիմնադրի կապիտալի ծևավորման, այնպես էլ՝ խթանից, կարգավորիչ միջոցառումների ուղղություններով: Այս իմաստով առաջար-

կում ենք Ազգային ինովացիոն բանկի հիմնադրումը՝ պետության մասնակցությամբ:

Ազգային ինովացիոն բանկի գործունեության նպատակների հիմնական արդյունավետ ֆինանսավորման իրականացման և ապահովման միջոցով խթանել Հայաստանում ինովացիաների ֆինանսավորման ենթակառուցվածքների ձևավորումը և կայացումը, արժեքորերի շուկայի զարգացումը, ինչպես նաև՝ ստանալ շահույթ:

Ազգային ինովացիոն բանկն ուղակիորեն պետք է վերահսկվի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որպես ֆինանսական, բանկային համակարգի և արժեքորերի շուկայից առանձնացված կառույց՝ իր գործառույթներով, նպատակներով, խնդիրներով, գործունեության կանոնակարգերով և նորմատիվային դաշտով: Ազգային ինովացիոն բանկի հիմնադրման և գործունեության ապահովման համար անհրաժեշտ է լուծել ներքոհիշյալ խնդիրները.

- իրավական դաշտ՝ իրականացնելով օրենսդրական բարեփոխումներ հետևյալ ուղղություններով. հիմնադրամների գործունեության կարգավորում, մտավոր սեփականության գնահատման ամրողական համակարգի ներդրում, արժեքորերի շուկայում ինովացիոն ձեռնարկությունների ցուցակման պարզեցված իրավական դաշտի ապահովում, հարկային օրենսդրությամբ անհրաժեշտ արտոնությունների սահմանում, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վերահսկողական գործառույթների իրականացման կառուցակարգերի ապահովում, ՀՀ կառավարության ինովացիոն գործունեության հայեցակարգում ինովացիայի գերակա ոլորտների վերանայում,
 - Ազգային ինովացիոն բանկի կանոնադրություն և գործունեության ներքին կանոնակարգերի ձևավորում մասնավորապես հետևյալ ուղղություններով՝ ֆինանսավորման ընթացակարգեր, ֆինանսական ռիսկերի կառավարում, ֆինանսական նորմատիվներ, մտավոր սեփականության օբյեկտների և բիզնես պլանների գնահատում, ինովացիոն ֆինանսավորման գործառույթների իրականացում, խորհրդատվության իրականացում, եթիկայի կանոններ, ինովացիոն ձեռնարկությունների վարկանշավորման համակարգ,
 - պետական ֆինանսավորմամբ նախաձեռնող խմբի ստեղծում,
 - Հայաստանում խոստումնալից ինովացիոն ծրագրերի հավաքագրում, նախնական գնահատում, բիզնես պլանների մշակում,
 - Ազգային ինովացիոն բանկի հիմնադիր կապիտալում 51% պետական մասնակցություն,
 - Ազգային ինովացիոն բանկի ակտիվ գովազդման, ներուժային ներդրողների բացահայտման, պետության միջազգային կապերի և պետություն – մասնավոր հատված համագործակցության գործադրմամբ մասնավոր ներդրողների ներգրավում՝ ապահովելով 49% հիմնադիր կապիտալի համարում, այդ թվում առանձնապես կարևորություն KFW և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի մասնակցությունը,
 - տնօրենների խորհրդի ձևավորում՝ ներառնելով պետության և մասնավոր ներդրողների ներկայացուցիչներին, ինչպես նաև համաձայն կորպորատիվ կառավարման սկզբունքների՝ անկախ տնօրենի առկայությամբ,
 - Ազգային ինովացիոն բանկի կառավարչի ինստիտուտը,
 - աշխատակազմի ձևավորման նպատակով մրցութային կարգով մասնագիտական կադրերի ընտրություն, անհրաժեշտ վերապատրաստումներ,
 - տեխնոլոգիական բորսայի հիմնադրում, որը կահմանի բաժնետոմսերի ցուցակման էապես մեղմ պայմաններ՝ հնարավորություն տալով ցուցակվել նաև դեռ 3 տարվա պատմություն ունեցող ինովացիոն ուղղվածությամբ ՓՄՁ-երին,
 - վերահսկիչ հանձնաժողովի ձևավորում,
 - փորձագիտական խորհուրդների ձևավորում,
 - անհրաժեշտ շենքային, մեթոդական և տեխնիկական հագեցվածության պայմաններ:
- Ներկայացներ Ազգային ինովացիոն բանկի գործառնական կառուցվածքը (գծապատկեր 1):



Գծանկար 1. Ազգային ինովացիոն բանկի կառուցվածքը

Ազգային ինովացիոն բանկը ոչ միայն գուտ ֆինանսավորող կառույց է, այլև ֆինանսական կառավարման, փորձագետների, մտավոր սեփականության օբյեկտների գնահատողների, շուկայացման կառավարիչների պրոֆեսիոնալ խմբերի կենտրոն:

Ազգային ինովացիոն բանկում պետության մասնակցությունը պետք է լինի ժամանակավոր սկզբունքով, այն իմաստով, որ սկզբնական շրջանում կառավարության կողմից պետք է կիրառվի Հայաստանի Հանրապետությունում ինովացիաների ֆինանսավորման առաջնային նախաձեռնություն, ինստիտուցիոնալ առումով ոլորտի կայացում, որը հետագայում կփոխարինվի մասնավոր ներդրումային աղբյուրներով: Վերջինս, մասնավորապես, կարող է իրացվել հետևյալ ձևերով՝ Ազգային ինովացիոն բանկի կողմից ֆինանսավորված ինովացիոն ձեռնարկությունների կայացման փուլում դրանց արժեթղթերի ցուցակում բորսայում և բաժնետոմսերի վաճառք, ինչպես նաև կառույցի հիմնադիր կապիտալի պետական փայարաժնի վաճառք մասնավոր ներդրողներին:

Առաջարկում ենք Ազգային ինովացիոն բանկի վերահսկողության ներք ձևավորել նաև խթանիչ վարկանշավորում Հայաստանի ձեռնարկությունների ինովացիոն ակտիվության գծով: Ինովացիոն վարկանիշը պետք է առաջին հերթին հաշվի առնի ձեռնարկության աշխատակազմի մասնագիտական առաջադիմությունը, ձեռնարկության ինովացիոն նախագծերը, դրանց ինովացիոն խորությունը, շուկայական հաջողությունները և ոչ մի դեպքում պետք է հաշվի շառնի ձեռնարկության խոշորությունը որպես դրական գործոն: Մյուս կողմից, առաջարկում ենք այն ձեռնարկությունները, որոնք կունենան ինովացիոն բարձր վարկանիշ, իրենց կատարած կենսաքաղաքային վճարումների շափով Ազգային ինովացիոն բանկի կողմից ստանան հետա-

դարձ ֆինանսավորում հատուկ նախատեսված հաշվի վրա, որի կեսը առաջարկում ենք ուղղել ինովացիոն նախագծերի ֆինանսավորման դեպքում որպես պետական երաշխիք, քառորդ մասը՝ նպատակային ֆինանսավորում աշխատողների գիտելիքների կառավարման, քառորդ մասը՝ աշխատողների վերապատրաստման ուղղություններով:

Առաջարկում ենք նաև Ազգային ինովացիոն բանկի միջոցներով ֆինանսավորել ինովացիոն տեսանկյունից ակտիվ, Ազգային ինովացիոն բանկից ֆինանսավորում ներգրաված և որոշակիորեն կայացած ճեղարկությունների բաժնետոմսերի նախնական տեղաբաշխումը տեխնոլոգիական բորսայում:

Այսպիսով, կարեւրելով Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման ապահովման առումով գիտելիքահեն տնտեսության խթանումը, էապես արդիական են դառնում ինովացիոն գործունեության կայացման և զարգացման նպատակով դրա արդյունավետ և ներուժային ֆինանսավորման լուծումները, որտեղ մեծ դեր ու կշիռ պետք է ունենա պետությունը, որպես մի կողմից՝ ինովացիոն գործունեության ֆինանսավորման ենթակառուցվածքների և ինստիտուցիոնալ օրենսդրական հիմքերի ձևավորող, մյուս կողմից՝ այդ գործունեության անմիջական ուղղակի ֆինանսավորման մասնակից: Այս իմաստով գտնում ենք, որ Ազգային ինովացիոն բանկը կարող է հանդիսանալ ինովացիոն գործունեության ֆինանսավորման հիմնախնդիրների մեկտեղված լուծում Հայաստանի Հանրապետության օրինակով:

ՎԱՐԱՆ ԱՎԵՏԻՍԻՍԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԿԶԲՈՒԹԵՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Նախարար:

Խորհրդային տնտեսակարգը սահմանում էր բոլոր ոլորտների պետական սեփականության և պետական շահի գերակայություն, որը բնականարար հիմքեր էր ստեղծում պետության կողմից իր իսկ սեփականության նկատմամբ պարտադիր ապահովագրության պահանջներ սահմանելու համար: Ազատ տնտեսական հարաբերությունները ստեղծում են մասնավոր սեփականություն և մասնավոր շահ հասկացությունները, և անհրաժեշտություն է առաջանում հստակ պատկերացնելու այն սկզբունքները, որոնց հիման վրա կարելի է առանձնացնել պարտադիր ապահովագրության ենթակա անհրաժեշտ ուղղությունները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն. «... ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ձևով: Պարտադիր ապահովագրության իրականացման դեպքերը, կարգը և պայմանները սահմանվում են առանձին օրենքով: Կամավոր ապահովագրությունն ապահովադիր կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրություն է: Պարտադիր ապահովագրությունը ապահովադիր կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմանները և իրականացման կարգը կարգավորվում են ՀՀ